ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«25» դեկտեմբերի 2024 թ. № 1720-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N 812-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 16-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1" Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջների և դրանց ծրագրային ապահովման համապատասխանության եզրակացության տրամադրման և նոր ձեռք բերված կամ վարձակալած հսկիչ դրամարկղային մեքենաների գրանցման ընթացակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի N 696-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 812-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) հավելված 1-ի 1-ին կետի «Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն» բառերը փոխարինել ««Ջի Սոլյուշնս» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

2. Հրամանի Օրինակելի ձև N 1-ի «ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն» բառերը փոխարինել «ՀՀ ՊԵԿ-ի «Ջի Սոլյուշնս» պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

12/25/2024

X

ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Signed by: HAKOBYAN EDUARD 3001910811 ԷԴՈՒԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ